

Ա Շ Տ Ա Ր Ա Կ Ի Շ Ր Զ Գ Ո Ր Ծ Կ Ո Ս

ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ
ԿՈՄԻՏԵՅԻ ԿՈՂՄԻՑ 1935 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ

63(47.928)

Ա-65

1936

ՅԵՐԵՎԱՆ

13 FEB 2013

04 AUG 2010

63(47.925)
Ա-65

1936 թ. ԴԱՇՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՎԱՆՈՒՆԵՐԸ

Հողի նախապատրաստումը գարնանացանի համար սկսել աշնանը, կատարելով ցրտաներկ ըստ յենթաջրջանների հետևյալ ժամկետներում՝

1009
39487
107
J

1. Ուտիանի յենքաբաժնի.— Ընդգրկելով Աշտարակ, Չոսկեվազ, Փաթրինջ, Ագարակ, Հախս, Փարբի, Թաքիա, Կոմունա, Նազովան, Մոզնի գյուղերը՝ 15/9-ի մինչև 15/11-ի:
2. Ղարաբաղի յենքաբաժնի.— Ընդգրկելով Մաղաթ, Ավան, Դոյթուր, Դղբ, Ինաքու, Որդով, Անգրսակ գյուղերը՝ 1/9-ի մինչև 1/11-ի:
3. Կարբի յենքաբաժնի.— Ընդգրկելով Ուշի, Ոհանավան՝ 1/9-ի 15/11-ի:
4. Յեղվարդի յենքաբաժնի.— Ընդգրկելով Խոզրի, Փոքրավան, Ճաթղան, Աշերաբաթ, գյուղերը՝ 1/9-ի մինչև 15/11-ի:
5. Ղարաբաղի յենքաբաժնի.— Ընդգրկելով Արբել, Թղիթ, Թուխնաբի, Բարաշամբ գյուղերը՝ 10/9-ի մինչև 1/11-ի:
6. Կոսի յենքաբաժնի.— Ընդգրկելով Ուջան, Թալիշ, Եամիրյան գյուղերը՝ 1/9-ի մինչև 10/11-ի:
7. Կոսի յենքաբաժնի.— Ընդգրկելով Բյուրաբաթ, Սաղմոսավան գյուղերը՝ 1/9-ի



8. Բյուրականի յեմբաբազան.— Ընդգրկելով Փերսի գույզը՝ 1/9-ի մինչև 1/11-ի:

Վարի խորութիւնը ընդո. նել 18—20 սանտիմետր հացահատիկային կուլտուրաների համար, իսկ բանջարանոցի և ծխախոտի համար ցանքսը ամբողջապես ապահովել ցրտահերկով՝ 20—22 սանտիմետր խորութիւնով: Վորպես կանոն հենց հնձից անմիջապէս հետո ծղնտաձար կատարել 6—8 սանտիմետր խորութիւնով բազմախոփանի գութաններով:

Բերքատուութիւն բարձրացման և մոլախոտերի դեմ պայքարելու եֆեկտավոր միջոցառումներից մեկն է՝ հնձից 7—10 որ հետո ծղնտի այրումը: Առաջին էերթին այրել կոմբայնով հնձված տարածութիւնը, նախորոք ապահովել հակահրդեհային միջոցները:

Այն վայրերում ուր հնարավոր չի լինի զարնացանը ամբողջապես ապահովել ցրտահերկով, կատարել զարնանավար և ցանքս. հացահատիկային կուլտուրաների ընտելեանների, խոտաբույսերի ըստ յեմբազըջանների հետեյալ ժամկետներին՝

1. Յեմբաբազան.— Հացահատիկ և խոտաբույսերի համար 20/3-ի մինչև 20/4-ի.

Ընդեղեններ 10/4-ի մինչև 25/4-ի:

2. Յեմբաբազան.— Հացահատիկ և խոտաբույսեր 10/4-ի մինչև 10/5-ի.

Ընդեղեններ՝ 20/4-ի մինչև 1/5-ի:

3. Յեմբաբազան.— Հացահատիկ և խոտաբույսեր 1/4-ի մինչև 5/5-ի

Ընդեղեններ՝ 10/4-ի մինչև 5/5-ի:

4. Յեմբաբազան.— Հացահատիկ և խոտաբույսեր 20/3-ի մինչև 20/4-ի.

Ընդեղեններ 25/3-ի մինչև 20/4-ի:

5. Յեմբաբազան.— Հացահատիկ և խոտաբույսեր 5/4-ի մինչև 5/5-ի.

Ընդեղեններ 10/4-ի մինչև 10/5-ի:

6. Յեմբաբազան.— Հացահատիկ և խոտաբույսեր 10/4-ի մինչև 10/5-ի.

Ընդեղեններ 15/4-ի մինչև 10/5-ի:

7. Յեմբաբազան.— Հացահատիկ և խոտաբույսեր 15/4-ի մինչև 10/5-ի.

Ընդեղեններ 20/4-ի մինչև 10/5-ի:

8. Յեմբաբազան.— Հացահատիկ և խոտաբույսեր 10/4-ի մինչև 10/5-ի.

Ընդեղեններ 15/4-ի մինչև 10/5-ի:

ՄԵՐՄԵՐԻ ՆՈՐՄԱՆ ՄԵԿ ՀԵԿՏԱՐԻՆ
 Մեկ նեկտար սերմանոսյի ցորման քնդունել քսս յեքաբարդունմեքի

№	Յենթաշըրջանները անունը	Մզնանացանի ցորեն		Պարբի		Հանար	Ընդեղեններ		Ցուգաբույս
		պտմոտոշ	պտմոտոշ	պտմոտոշ	պտմոտոշ		պտմոտոշ	պտմոտոշ	
1	Ոչական	1,8	1,8	1,8	1,8	1,7	0,7	0,4	0,5
2	Ղարաջուլար	1,6	1,7	2	2	1,7	0,8	0,6	0,5
3	Կարբի	1,8	1,8	1,8	1,8	1,6	0,8	0,6	0,5
4	Յեղվարդ	1,6	1,5	1,6	1,4	1,4	0,7	0,5	0,4
5	Կոշ	1,8	1,8	2	1,8	1,6	0,8	0,6	0,5
6	Ղարաջուրան	1,6	1,5	1,6	1,4	1,4	—	0,6	0,4
7	Աբտաշավան	1,8	1,6	2	1,9	1,5	0,7	0,6	0,5
8	Բյուրական	1,8	1,6	2	1,8	1,5	0,7	0,6	0,5

ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐ

№	Յենթաշըջանների անունը	Կարնպան	Վեղա	Ասվոյա	Քյուրուշի նա
1	Ոչական	1,2	1,0	0,3	0,8
2	Ղարաջուլար	1,0	1,0	0,4	1,0
3	Կարբի	1,0	1,0	0,4	1,0
4	Յեղվարդ	1,0	1,0	0,3	1,0
5	Ղարաջուրան	1,0	1,0	0,3	1,0
6	Կոշ	1,0	1,0	0,3	0,8
7	Աբտաշավան	1,0	1,0	0,4	0,8
8	Բյուրական	1,0	1,0	0,4	0,8

ԿՐԿՆԱՎԱՐ

Բոլոր կուլտուրաների համար կատարված ցրտահերկը փարնանը մինչ ցանքս սկսելը՝ 10—15 որ առաջ, հողը քեշի գալուց կրկնավար անել և անմիջապես փոցխել: Փոցխման հետևանքով դուրս յիկած մոլախոտերի արմատները, բուսական մնացորդները, դուրս հանել, գաշտից և այրել: Կրկնավարի խորությունը ընդունել 10—12 սանտիմետր:

ՅԵԼԵՐԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ

Վաղ ցելը կատարել 18—20 սանտիմետր խորությամբ: Ներքին դու գրենթաց վաղ ցելը զիգզագելու Մոլախոտերի վռնչացման և խոնավության պահպանման համար վաղցելը ամուսն ընթացքում՝ մոլախոտերը յերե-

վաղուն պես մշակման յենթարկել՝ 1—2 անդամ բաղմամբ
 քոփ գութանն երով կամ դիզգագնեքով:

Վաղ ցելերն աշնանս ցարը սկսելուց 10 որ առաջ
 կրկնավարել 10—12 սանտիմետր խորությամբ. ըստ
 յենթաշրջանների վաղ ցել կատարել հետևյալ ժամկետ-
 ներին՝

1-ին յենթաշրջան	20/3-ի մինչև	1/5-ի.
2-րդ	» 1/5-ի	» 25/7-ի.
3-րդ	» 1/4-ի	» 15/5-ի.
4-րդ	» 20/3-ի	» 15-ի.
5-րդ	» 15/5-ի	» 15/5-ի.
6-րդ	» 1/4-ի	» 10/5-ի.
7-րդ	» 15/4-ի	» 25/5-ի.
8-րդ	» 25/4-ի	» 10/6-ի.

ԱՇՆԱ ԱՑԱՆ

Աշնանացանի ժամկետները ընդունել ըստ յենթա-
 շրջանների՝

1-ին յենթաշրջան	15/9-ի մինչև	15/10-ի
2-րդ	» 29/9-ի	» 15/10-ի
3-րդ	» 5/9-ի	» 10/10-ի
4-րդ	» 15/9-ի	» 15/10-ի
5-րդ	» 1/9-ի	» 5/10-ի
6-րդ	» 5/9-ի	» 5/10-ի
7-րդ	» 5/9-ի	» 10/10-ի
8-րդ	» 10/9-ի	» 10/10-ի

Փարնանը բացվելուն պես գիզգազի բաղմամբ
 խոտաբույսերի ամբողջ տարածությունը՝ Ինկատի ու-
 նենալով գարնանացան հացահատիկի ցածը բերքա-

ավալթյունը, աստիճանաբար 1936 թվից սկսած Յեղ-
 վարդի յենթառայտում 20 տոկոսով կրճատել պարնա-
 նացանի հացահատիկը, այդպիսին ավելացնելով աշնա-
 նացանի վրա:

ՀԱՅՍՅԱՍԻԿԻ ՔԱՂՇԱՆ

Հացահատիկը քաղհանել 100 տոկոսով, նախքան
 ցողունակալելը, ըստ վորում առաջին հերթին աշնա-
 նացանը նախորդ կազմելով քաղհանվելիք տարածու-
 թյան հերթականությունը սահմանող որացուցային
 պլան:

ՀԱՅՍՅԱՍԻԿԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ՁԲԵԼԸ

Հացահատիկային կուլտուրաները ջրել՝

- I. Աշնանացանը ցանելուց հետո.
- II. Թփակալման շրջանում.
- III. Կաթնային շրջանում:

ԲԵՐՔՍՅԱՎԱՔ

Բերքահավաքին զուգընթաց կատարել քյուլաչի տե-
 դափոխումը, նախորդ խուրձ կապելով: Սույի վրա
 տեղավորել հասկերի ծայրերը զեպի ներսև գիզի կա-
 լում 30—40 մետր հեռավորության վրա: Միչև հունձը
 սկսելը՝ առնվազը 10 որ առաջ ավարտել կալի նախա-
 պատրաստումը, ապահովելով կալը հակահրդեհային
 միջոցառումներով՝ (փոսերի փորելը—ջրով լցնելը, առու-
 ներ անցկացնելը. լիքը ջրով տակառներ ունենալը,
 դուլերը ունենալը և այլն):

Նախապատրաստել բերքի տեղափոխման հետևից ունեցող լինվենտարը և պահեստները:

Սխտահանել վերանորոգված սերմադուրիչները, պահեստները, կշիռքները, տարաները, փ. խաղրական միջոցները (սալիբը ֆուրգոնները): Պահեստը պետք է ապահովված լինի շպակառով, բրնձենտներով, բահերով, ավելներով, սալակներով և այլն:

Կալսուժը սկսել հնձին զուգընթաց, այն ե՞ հնձի սկսման օրից 2 օր հետո:

ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Պարարտանյութ տեղափոխել դաշտ՝

1. Յրտահերկի տակ հացահատիկային կուլտուրաների համար ըստ յենթաշրջանների՝

ա) Յեղվարդի յենթառայունը՝ պարարտացնել քաղաղակա գոմախրով, վորպես անջրտի հողամասեր, այդպիսին տեղափոխել դաշտ աշնանը, հոկտեմբեր ամիսներին և ցրել: Մեկ հեկտարին տալով 36—50 տոննա. գոմախրը ցրելուց անմիջապես հերկել, նույն յենթառայունում վաղ ցելի տակ հացահատիկային կուլտուրաների համար տեղափոխել, ցրել և անմիջապես հերկել մարտի 15-ից մինչև մայիսի 1:

բ) Կարբի, Կոշի, Ոչականի յենթաշրջաններում անջրտի հողամասերում պարարտացում կատարել ցրտահերկի տակ, մինչև հերկը սկսելը՝ սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներում. ցրելուց հետո անմիջապես հերկել. մեկ հեկտարին տալով 36—40 տոննա. իսկ վաղցելը դարձանը մարտի 15-ից մինչև մայիսի 1-ը:

Ջրովի հողամասերը հացահատիկի համար պարարտացնել

առաջինը հավաքական պարարտանյութերով (կոմպոստ), նույն ժամկետներին մեկ հեկտարին տալով 15—20 տոննա:

Նույն յենթառայունում ծխախոտի և բանջարաբույսի համար հատկացված հողամասերը պարարտացնել գոմախրով, ապահովելով ամբողջ ցանքսի տարածությունը ցրտահերկով. մեկ հեկտար ծխախոտի տարածությանը տալ 18—20 տոննա գոմախր, իսկ բանջարանոցային կուլտուրաների համար մեկ հեկտարին 50—70 տոննա:

2. Մեքենացման աշխատանքները պահովելու և թերթատվությունը բարձրացնելու նպատակով՝

ա) հեռացնել քարակույտերը և այլևս քարակույտեր չստեղծել. կատարել քարահավաք և անմիջապես դուրս բերել դաշտից:

բ) միջնակների վերացում կատարել հերկերին զուգընթաց, ղեկավարվելով ստացված առաջադրանքներով:

3. Շրջանը կոնդենցիոն և լավորակ սննդամասերով ապահովելու համար կատարել սերմացուների մաքրության, տնտեսական պիտանիության և ծրուսակության ստուգում, ըստ վորում գարնանացանի սերմացույցի ստուգումը կատարել 2 անգամ. մեկը ավարտել մինչև դեկտեմբերի 10, իսկ 2-րդը՝ գարնանացանից 20 օր առաջ. աշնանացանի սերմացույցի ստուգումն ավարտել աշնանացանը սկսելուց առնվազը 10 օր առաջ:

4. Մի շարք տարիների հետազոտումից պարզվել է, վոր սերմացույցի պիտանիության լավագույնը արդյունք չի տալիս, ուստի խստիվ արգելվում է հիշյալ յենթանակով ախտահանումը:

Չոր ախտահանումը կատարել ախտահանիչ մեքենայով, մեկ ցենտներ ցորենին վերցնել 75 գրամ գալիտովի փոշի կամ 150 գրամ Ա. Բ. փոշի, ըստ վորում Ա. Բ-ով ախտահանումը սկսել փետրվարի 1-ից, գալիտովի փոշիով մարտի 1-ից:

Գարու և հաճարի սերմացուն ախտահանել կիսաչոր լեղանակով, մեկ մաս ֆորմալինին վերցնել 80 մաս ջուր և մեքենայով սրսկել սերմացուն ցանքսից մեկ որ առաջ: Ախտահանված սերմացուն պահել չոր և մաքուր պահեստներում:

5. Մեքենա-գործիքների հաշվեառումն ու վերանորոգումն զարնանացանի համար սկսել դեկտեմբերի 1-ից, այն հաշվով, վոր զարնանացանը սկսելը լրիվ պատրաստ լինի թե՛ զարնանացանի և թե՛ բերքահավաքի գյուղգործիքներով, իսկ աշնանացանի գյուղ-գործիքների վերանորոգումը սկսել մայիսի 15-ից և ավարտել հունիսի 15-ին:

ՄԻԱԽՈՑԻ ՇԻՅԼԱՆՈՑՆԵՐԸ

1. Հողի բնօրոյունք յեվ մեոկումք.

Շիթիլանոցի հողի ընտրությունը պետք է կատարել աշնանը մինչ նոյեմբերի 10-ը, վորը պետք է պաշտպանված լինի հեղեղներից, քամիներից և լինի արևոտ: Հողամասը պետք լինի փխրուն և ջրաթափանցիկ, ստորերկրյա ջրերից հեռու, հողը պետք է լինի հարթավայրում, կամ քիչ թեքություն ունեցող տեղում, դեպի հարավ կամ հարավ-արևմտյան ուղղությամբ և ապահովված լինի վտոգվիլիք ջրերով:

Սառն և կիսատաք մարգերի համար հատկացված հողամասում 1-ին փորը պետք է կատարել աշնանը:

ՇԻՅԼԱՆՈՑԻ ՏԻՊԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Մեկ հեկտար տարածություն շիթիլելու համար պետք է ունենալ 75 քառակուսի մետր շիթիլային տարածություն, սառն մարգերի շիթիլանոցի 2 ըզ փորը պետք է ավարտել մինչ փետրվարի 5-ը, իսկ մարգերի պարարտացումը պետք է ավարտել 5 որ ցանքսից առաջ: Սառն մարգերում պետք է կատարել հողի և գոմաղբի ախտահանում մինչ 10-րդ ամիսը, սառն մարգերի լայնությունը պետք է լինի 1 մետր, իսկ յերկարությունը 8—10 մետր, Մարգերի ուղղությունը պետք է լինի արևելքից դեպի արևմուտք, իսկ թեքությունը դեպի հարավ: Շիթիլներն աճեցնելու համար անդատու շերտը պետք է բաղկացած լինի հին փթած գոմախբի, բերբի հողի, և ավալի խարնուրդներից:

ՇԻՅԼԻ ԱՃԵՑՈՒՄԸ ՅԵՎ ԽՆԱՄՔԸ

Մարգերում պետք է ցանել տեսակավոր սերմացու, մեկ քառակուսի մետր տարածության վրա մեկ գրամ, վորը պետք է ախտահանված լինի նախքան ցանելը:

Ցանքը սառը մարգերում պետք է կատարել մինչ 15/3-ի, իսկ բայ և կիսատաք մարգերում մարտի 10-ից մինչև ապրիլի 10-ը:

Հավասար ցանքս ստանալու համար պետք է սերմը խառնել գոմախբի հետ, այն ե՛ մեկ մաս սերմին 8 մաս գոմախբ:

Ցանքը պետք է կատարվի հմուտ մարդկանց միջոցով, ցանքսից առաջ և հետո արհրաժեշտ է մարգերը

նւտեցնել (տարամբովկայի լենթարկել): Յանքսը չպետք է կապարել քամու ժամանակ: Շիթիլանոցը պետք է ջրել ըստ պահանջի, որեկան 2 անգամ, առավոտյան և յերեկոյան:

Յրտից, կարկտից, և ընդհանրապես վատ յեղանակից պաշտպանելու համար ամբողջ շիթիլանոցը պետք է ծածկոյներով ծածկել:

Շիթիլների աճեցման համար պետք է 3—4 անգամ քախհանել—գլխավորապես յերեկոյան և ամպամած որերին. քաքհանից առաջ պետք է սնույնն ջրել:

ՇԻԹԻԼԻ ՀԱՆԵԼԸ

Շիթիլը հանելուց առաջ նախորոք պետք է ջրել մարզերը: Շիթիլները պետք է հանել մեկ մեկ (հասահատ) և դաշտ պետք է տեղափոխել արկղներով կամ քթոցներով՝ արմատները ներս դրված դրուժամբ: Շիթիլ անելու համար պետք է ընտրել 4—5 տերև ունեցող պիտանի և առողջ շիթիլներ:

ԾԻԱԽՈՏԻ ԱՆԾԻԼՈՒՄԸ

Կատարել մայիսի 10-ից մինչև հունիսի 10-ը. մեկ հեկտարում 75000 հատ. սածիլի հեռավորութունը շարքերում սահմանել մեկը մյուսից 20 սանտիմետր, իսկ միջշարքային տարածութունը՝ 60—70 սանտիմետր:

Սածյուլից 3—4 որ հետո կատարել չորացած տեղերի լրացում նոր սածիլներով. ծխախոտի ջուր տալն ըստ պահանջի 6—5 անգամ, ըստ վորում առաջին ջուրը սածիլումից մեկ որ հետո: Ծխախոտի քախհանումը կատարել:

ա) սածիլումից 10 որ հետո մայիսի 20-ից մինչև հունիսի 10-ը.

բ) հունիսի 5-ից մինչև հունիսի 25-ը.

գ) հունիսի 20-ից » հունիսի 10-ը.

Ծաղկատել և բջատել վեգետացիայի ընթացքում 2 անգամ. բերքահավաքը սկսել ծխախոտի տեխնիկական հասունացման շրջանում 5 նվազ՝

1) Հուլիսի 15-ից մինչև ոգոստոսի 1-ը.

2) Հուլիսի 22-ից » ոգոստոսի 10-ը.

3) Ոգոստոսի 25-ից մինչև ոգոստոսի 26-ը.

4) Ոգոստոսի 25-ից » սեպտեմբերի 15-ը.

5) Սեպտեմբերի 10-ից » սեպտեմբերի 25-ը.

Ֆիլիճի հավաքը սկսել սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 5-ը. ծխախոտի տեղափոխումը կատարել քաղին զուգընթաց, խնամքով դասավորելով սայլի մեջ:

Տեղափոխումից անմիջապես հետո շարել 4 մետրանոց ստանդարտ թելերով և խտիճ անել (դեղնելուց հետո) անմիջապես քաշել ռամկաների վրա:

Չորացած ծխախոտները հավաքել առավոտյան հովերին:

Չորացած ծխախոտը անպայման խոնավանոցում, կախել, վորից հետո տեսակավորել՝ հմուտ մարդկանց ձեռքով և հակավորել:

ԴԱՇՏԱՅԻՆ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

1. Դաշտային մկների դեմ հետազոտումը սկսել մարտի 5—15-ը. իսկ պայքարը սկսել մարտի 15-ից ապարտել մարտի 25-ը:

2. Մորեխի ձվապարհերի հետադոտումը սկսել մարտի 20-ից մինչև ապրիլի 10-ը. իսկ պայքարը սկսել մայիսի 25-ից, ավարտել հունիսի 20-ին:

3. Ծխախոտի և բանջարանոցային սածիլանոցներում ստորերկրյա ֆլասատուների (բոյբոյի) դեմ պայքարը սկսել մարտի 15-ից և ավարտել մարտի 20-ին:

4. Ծխախոտի և բանջարանոցային սածիլված հողամասերում (զաշտում) բոյբոյի և սովկայի դեմ պայքարը սկսել ապրիլի 25-ից և ավարտել մայիսի 5-ին:

Ծխախոտի սնկային հիվանդությունները — թաքուխի դեմ պայքար կազմակերպել հունիսի 25-ից մինչև հուլիսի 10-ը:

Բանջարանոցային ֆլասատուների տլիայի դեմ պայքարը կազմակերպել 2—3 անգամ, ըստ վորում առաջինը՝ մայիսի 25-ից մինչև մայիսի 30-ը. 2-րդը՝ հունիսի 5-ից մինչև հունիսի 10-ը. 3-րդը՝ հունիսի 25-ից մինչև հուլիսի 10-ը:

Կաղամբի ցիցի դեմ պայքար սկսել հուլիսի 5-ից մինչև հուլիսի 15-ը:

Բանջարանոցային և բոստանային ալյուրացող հիվանդությունների դեմ պայքար սկսել հունիսի 10-ից մինչև հունիսի 25-ը:

Հիշյալ ֆլասատուների և հիվանդությունների դեմ պայքարելու միջոցառումները կիրառել ուղարկվող հատուկ հրահանգներով:

ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ԿՈՒՍՈՒՐԱՆԵՐԻ ՋԵՐՄՈՑՆԵՐԻ ՊԱՐԱՐՍԱՑՈՒՄԸ

Սուրը ջերմոցները պատրաստել հարավային կամ հարավ-արևմտյան թեքություն վրա. պաշտպանված առաջը քամիներից և ստորերկրյա ջրերից հեռու, վոչ կավային հողերում:

Ջերմոցների միծությունը՝ լայնությունը 1,5 մետր, յերկարությունը 2 մետր, խորությունը 1 մետր: Ջերմոցների փոսերի փորման աշխատանքները սկսել անպայման աշնանը: Վորպես կանոն ջերմոցների մեջ 60 սանտիմետր խորությունը լցնել չրայքայված աղբ, 20 սանտիմետր հող, իսկ 10 սանտիմետր քայքայված աղբի հետ խառնած հող, անպայման մաղած, վորպես աշխատանքը կատարել փետրվարի 20-ից:

Ջերմոցներում սկսել ցանքսը մարտի 5-ից. ցանքսից անմիջապես հետո յուրաքանչյուր յերկու օրը մեկ անգամ ցնցուղով ջրել մինչև փխրացումը, այնուհետև կատարել 3—4 անգամ փխրացում և քաղհան մինչև մայիսի 15-ը:

Բանջարանոց տեղափոխել սածիլները՝ ժամկետ մայիսի 15-ին, նախորոք պատրաստելով մարգերը:

1. Կաղամբի շամար թմբերի հեռավորությունը 1,5 մետր. յուրաքանչյուր մարտի մեջ 4 շարք. բույսը բույսից՝ 50 սանտիմետր: Թմբերը կապելուց հետո մարգերը հարթել ձեռքի փոցխով: Պատրաստել ոջախներ. ոջախները պատրաստել մոխիրով և ապա սածիլը կատարել: Սածիլումը կատարել կամ վաղ առավոտյան, կամ յերեկոյան դեմ: Սածիլումից անմիջապես հետո ջրել:


Բանջարանոցը մինչև բերքահամաքը պետք է ջրել
8—10 անգամ, ամեն մեկ ջրից հետո հողը քեշի գա-
լուց պետք է փխրացնել և քախհանել:

ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ՇԻՆ ՅԵՎ ԲԵՐԲԱՏՈՒ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԱՄԲ

1000
39487
4017

1. Այգեբրացը կատարել վաղ գարնան, յերգ ձուլնը հալ-
վել և խիստ պարզկաների վտանգը անցել և, մարտի
15-ից մինչև ապրիլի 5-ը խնամքով և վորակով,
հողը չխողնելով կուտակված վազերի տակ՝ ցրել
թմբերի և շարքերի մեջ:
2. Այգեկատի աշխատանքները հանձնարարել փորձված,
ետի տեխնիկային լավ ծանոթ մարդկանց, ետի
ժամանակ պետք է հեռացնել՝
 - ա) թույլ մատերը, վորոնցից բերք չի սպասվում:
 - բ) հիվանդոտ, վիրավոր, կարկտահարված և այլ
պատահարներից զլասված մատերը:
 - գ) բնամատերը և այլ բոլոր մատերն ու շվերը, վո-
րոնք խանգարում են վազերի կանոնավոր ձևավոր-
մանը, ետի աշխատանքները պետք է սկսել ան-
միջապես այգեբացից հետո, յիրբ սկսվում է հյու-
թիբի շարժումը— լացը, արգելիլ յերկար և անվո-
րակ ետ կատարելը ու վազերը ծանրաբեռնիլը
ավելորդ մատերով և թևերով (տաշտակներով):
3. Ետած այգու արքատի հավաքն ու տեղափոխումը
կատարել ետի լուրջ քննությամբ և կետ մարտի 17-ից
—10-ը ապրիլի 1-ը:



4. Այգեփորը սկսել ետին զուգընթաց, կատարել այգիների համատարած փոր 100 տոկոսով, ըստ վորթի թմբերը փորել 20—25 սանտիմետր խորությամբ: Իսկ միջխմբային տարածությունները (առուները) 18—20 սանտիմետր խորությամբ, վորպես կանոն — առաջ փորել միջխմբային տարածությունները և հետո թմբերը: Խոսափել միջխմբային տարածությունները 20 սանտիմետր ավել կատարելուց, վորով ֆլասում են վագերի արմատները: Երկրի մասերին: Խոսիվ արգելվում է այգեփոր կատարել բողբոջների փթթելու (ուռչելու) և ծաղկման ժամանակ, փորի հետ միասին կատարել մալխոտների արմատների հավաք (չայիք, բխյն), դուրս հանել այգուց և այլրել, այգեփորի ժամկետ՝ մարտի 17-ից մայիսի 5-ը:
5. Փորի ընթացքում բաց անել վագերի բները, մաքրել այն ավելորդ, ֆլասված, փթած մասերից և բների մեջ բնակված ֆլասատուներից, դուրս հանել այգուց և այլրել: Փորի ժամանակ ունենալ առանձին հատուկ անոցներ:
6. Փորձի ընթացքում անդալիսի միջոցով լրացնել այգու բաց մնացած տեղերը (քոռացած ոջախներները), նախորոք ետի ընթացքում այդ նպատակի համար առանձնացված մատերով:
7. Այգիները բուժել բորոքոյան հեղուկով 2 անգամ, առաջին բուժումը մինչև ծաղկելը՝ մայիսի 10-ից — մայիսի 25-ը, լերկրորդ բուժումը ծաղկաթափից հետո՝ հունիսի 16-ից — հունիսի 20-ը, յերրորդ բուժումը անցկացնել անհրաժեշտության դեպքում: Որդիլում (սև) յերևալու դեպքում, ծծումբով փո-

շտում հաաարելու համար կլինի հատուկ հրահանգ:

8. Այգիները խչմարել հիմնականում մեկ անգամ՝ հունիսի 20-ից մինչև հուլիսի 5-ը և լրացում կատարել հուլիսի 25-ից մինչև ոգոստոսի 20-ը:
9. Հատուկ պայքար կազմակերպել գայլուկի (դաղձի) նկատմամբ, այգիների առուների յեղերքը միանգամայն ազատ պահել մոլախոտերից և գայլուկից, թմբերի միջից վերացնել բոլոր տեսակի մոլախոտերի մնացորդները, վորոնք հանդիսանում են գայլուկի տարածման ոջախներ, այգում գայլուկ յերևալուն հետ արմիջապես մաքրել և այգուց դուրս հանել ու վառել:
10. Վազի վեգետացիոն (աճման) շրջանում կատարել 2 անգամ բջատում (սուղը տալ) հեռացնելով հոռացած և ավելնորդ մատերը, մաքրել վազը չորացած ճյուղերից և յիղունկներից (սուղը տալու), աշխատանքները պետք է հանձնարարել անպայման հմուտ փորձված այգեգործ մարդկանց 2-րդ անգամ (սուղը տալու) աշխատանքն պետք է կատարել սեկատերով (ետի մկրատով): Առաջին անգամ (սուղը տալ) մինչև ծաղկելը մայիսի 15 մայիսի 25, 2-րդ անգամ հունիսի 15-ից — հուլիսի 15-ը:
11. Ամառը կատարել 3 անգամ փխրացում — քաղհան հեռացնելով չաչիրի, բիյանի արմատները ու մոլախոտերը մինչև նրանց ծաղկելը — ժամկետ՝
1. 10—25-ը հունիսի (դաղարեցնել ծաղկմ. շրջանում).
 2. 10—20-ը հուլիսի.
 3. 1—10-ը ոգոստոսի.

12. Այգիները ջրել տարվա ընթացքում 3—5 անգամ:
- ա) ավարտել մինչև հունիսի 10-ը.
 - բ) հունիսի 15-ից հունիսի 10-ը.
 - գ) հունիսի 10-ից ոգոստոսի 5-ը.
 - դ) Խաղողաքաղից հետո թաղելու համար հոկտեմբերի 10-ից — նոյեմբերի 10-ը, խստիվ արգելվում է խաղողաքաղից 20 ուր առաջ այգիները ջրել:
13. Բոլոր այգիները անխտիր անցկացնել ասպրոբացիա, նշան անել (յարլեկ, պիտակ կպցնել) ասորտիմենտի մեջ մտնող գեֆիցիա փոփոխականները. համապատասխան համարներով հետագա զարգացումն ապահովելու համար:
14. Անցկացնել մասայական սեկեկցիա, ըստ վերում տարիներ շարունակ նկատված այն վազերը, վարոնք իսպառ բերք չեն տալիս, կամ անվորակ և շատ քիչ են բերք տալիս, վոր չի արդարացնում իրան, նշան անել հետագայում փոխարինելու այն նոր բերքատու վազերով. այսպես տնկումն անհրաժեշտ է բերքատվության բարձրացման համար.
15. Արգելել ձերկապ անելը այգեթաղի փոխարեն, կատարել այգիների լրիվ թաղ 100 տոկոսով, զգուշությամբ առանց վազին փյաս հասցնելու, վազերի կոլոելու աշխատանքը հանձնարարել հմուտ-փորձված մարդկանց ժամկետ հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը. կտրականապես արգելվում է խաղողանոցներում անասուններ արածացնելը և ուսնելը:
16. Այգիների պտուղեցացում. — բույսերն ել կենդանի եյակների, մարդկանց ու անասունների նման պետք է ունենան սնունդ, աճելու, զարգանալու և բերք

առաջ համար: Այդ սնունդը, վազն ել այլ բույսերի նման ստանում է հողից, բայց այն տարբերությամբ, վոր խաղողի թուփը տառնյակ տարիներ մնում է նույն հողի վրա և ուժասպառ է անում հողը, ուստի լեթե մենք ուզում ենք մեր այգիները ապահովել բարձր և կանոնավոր բերքով, ապա պետք է պահանջված ձևով ու քանակությամբ պարարտացնենք այգիները: Մեղ մտա ընդհանրապես նկատվում է մի տարի ավելի բերք, իսկ մյուս տարին՝ պակաս: Ահա այդպիսի անկանոն և փոփոխակի բերքից խուսափելու համար և միշտ բարձր բերք ունենալու համար, պետք է վազին անհրաժեշտ քանակությամբ ու սխտեմատիկորեն պարարտանյութ տանք և լրացնենք վազի սննդի այն պակասը, վորը սխտեմատիկ կերպով չի կարողանում լրացնել հողը:

Գոմաղը պետք է տալ 1 հեկտար այգուն 4 տարվա համար, 50—60 տոնն (3000—3600 փութ), վորից կեսը պետք է տալ 1-ին տարում, մյուս կեսը 3-րդ տարում:

Մտնորոշում. — Այն դեպքում, յերբ գոմաղի քանակությունը պակաս է, կարելի չե շուրաքանչյուր տարի մեկ հեկտարին տալ 13—15 տոնն գոմաղը, բայց ազդեցությունը նույն տարին չի բարտահայտվի, այլ կարտահայտվի հետագա տարիներում: Գոմաղը կարելի չե տեղափոխել այգիները թե աշնանը և թե վաղ գարնանը փորելուց անսխալապես առաջ, յերբ ձյունը հալվել է, գոմաղը պետք է հավասար կույտերով ցնել թմբերի դռին և փորից առաջ ցրել՝ փորելիս խառնել հողի հետ:

Մոխիրով պարարտացնելու համար՝ 1 հեկտարին պետք է տալ 1,5—2 ս ոնն: Մոխիրը պետք է տեղափոխել վաղ գարնանը և հավասարապես փռել թմբերի դոշին և փոքրի ժամանակ խառնել հողի հետ:

17. Խաղողի բերքահավաքը սկսել հոկտեմբերի (1—5 սահմաններում և ավարտել հոկտեմբերի 25-ին: Բերքահավաքին զուգընթաց (մինչև հոկտեմբերի 25-ը) հավաքել և թմբերից դուրս բերել խչձարները:
18. Գարնան գյուղատնտեսական աշխատանքների համար այգիներում գործադրվելիք գյուղատնտեսական գործիքները և մեքինաները՝ ետի մկրատները, սզոցները, լապասկաները, ետոցները, քերիչները, վերմորիչները (տորպիչները) վերանորոգել և նորերը ձեռք բերել, ժամկետ՝ փետրվարի 5—20-ը:
19. Խաղողի բերքահավաքի համար անհրաժեշտ գյուղատնտեսական գործիքները — տարները ու մառանները դուրսբերել, կողմերը, մկրատները, դանակները, տակառները (չլապներ և սայլի չաները, չաները, սայլերը և ֆուրգոնները պատրաստել, վերանորոգել ու նորերը ձեռք բերել, ժամկետ՝ սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 20-ը:
20. Նորատունկ այլի տնկելու համար առանձնացնել միջակ զարդադած մատեր, վորոնք նախորդ համարակալված են յիդիլ նախորդ տարում, այգիսիներին ընտրութուն կատարել, խուրձեր կապել 200-ական մատից, վրան ամրացնել փոփոխակի անունը կամ պիտակը (յառլիկը) և թաղել խրամատների մեջ—թեք ձևով, պահպանելով այդ ձևով մինչև հանձնելը:

ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈՎԱՆՈՆՆԵՐ

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ՏՆԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա) Հողամասի բնօրոյունք

Տնկարանի համար առանձնացվելիք հողամասերը ընտրելիս պետք է ընտրել՝

1. Հարթ հողեր, վորոնք զերծ լինեն ստորերկրյա ջրերից:
2. Հողի թեքութունը լինի դեպի հարավ կամ հարավ-արևմուտք:
3. Պաշտպանված լինի քամիների ազդեցութունից:
4. Ապահովված լինի ջրով:
5. Հնարավորութուններ լինի տնկարանի հետագա լայնացման համար:
6. Հսկիլու և խնամելու լայն հնարավորութուն ունենա:

բ) Հնդովորների ցամփսը (ճեղկա-սեյանցիկ)

1. Հողամասը մաքրել քարերից:
2. Պարարտացնել գոմաղրով կամ խառն աղբով, տալով հեկտարին 60—70 տոննա (120—140 սալ), նայած հողի կազմութանն ու բերրիությանը:
3. Հողամասը վարել 18—20 սմ խորությամբ, հավաքել մոխրատերի արմատները (չայլի և այլն), փոցխել զիզգազ փոցխով, ժամկետ 20/10—25/10-ի:
4. Պատրաստել մարգեր մեկ մետր լայնությամբ և

- 5—10 մետր յերկարությամբ յեղնելով հողամասի և ջրելու հարմարություններից:
5. Փոցիսի մարդերը, լավ հարթեցնել, ակոսներ քաշել ըստ մարդերի լայնության 10—15 սմ հեռավորության վրա, սերմերը ցանել ակոսների մեջ 2—3 սմ խորությամբ, ծածկել հողով և ջրել:
 6. Մեկ հեկտարում ցանել 50—60 կիլոգրամ խնձորի կամ տանձի սեբմ 25 10 15|11-ի:
 7. Զրել ըստ պահանջի՝ 8—10 սնդամ—25|4—1 10-ի, ըստ վորում առաջին ջուրը կատարել ցնցուղով (լեյլա) ցանելու ժամանակ:
 8. Քաղհանը և փխրեցումը կատարել ջրելուց հետո, յերբ հողը քիչի յե գալիս՝ 5—6 անգամ:
 9. Կատարել նոսրացում, յերբ նոր ծլած բույսերն արդեն արձակել են 3—4 տերև. հանած սածիլների արձատների ծալրերի մի յերրորդ մասը կտրել ծայրերից և տնկել շարքերի մեջ չըռուած կամ բաց մնացած տեղերը:
 10. Վայրակները մարդերից հանել աշնան տերևաթափից անմիջապես հետո 25|10—15|11-ի, տեսակավորել ըստ վայրակների հաստության, չափելով վայրակի արմատային վիզը: Առաջին տեսակը՝ 5—7 միլիմետր, 2-րդ տեսակը՝ 5—6 միլիմետր և 3-րդ տեսակը՝ 3—5 միլիմետր:
 11. Մեկ հեկտարից սասնալ 400000 հատ վայրակ, վորից առաջին տեսակի՝ 30 տոկոս, 2-րդ տեսակի՝ 45 տոկոս և 3-րդ տեսակի՝ 25 տոկոս:
 12. Վայրակների հանելուց և տեսակավորելուց հետո պահել հողում թեք զրությամբ, ծածկելով տնկիների յերկու յերրորդ մասը հողով:

գ) Տնկարանի առաջին ատվա ախտահաները

1. Աշնանը տնկարանի հողամասը մաքրել քարերից և պարարտացնել զոմաղրով կամ խառն աղբով, առլով մեկ հեկտարին 40—50 տոնն (80—100 սալլ) նայած հողի կազմության ու բերրիությանը՝ 15 10—20 10-ի:
2. Հողամասը վարել 25—30 սմ խորությամբ 20|10—10 11-ի:
3. Հողամասը գարնանը փոցիսի զիզգադ փոցխով 15 3—15 4-ի:
4. Պլանիրովկայի յնթարկել հողամասը ըստ հողափտորների ու վանդակների և պատրաստել վոտոգ/չ ցանցը 10 4—15|4-ի:
5. Տնկիները նախապատրաստել տնկման համար.
 - ա) սածիլ արված տնկիների արմատները թարմացնել, վիրավորված արմատները հեռացնել և առողջների ծայրերը կտրել:
 - բ) սածիլ չարված տնկիների արմատները կրտրել, թողնելով 12—18 սմ. իսկ տնկիների ծայրերը կտրել 18—22 սմ յերկարության վրա, կրտրելուց անմիջապես հետո գնել ջրի մեջ և ապա նոր հանել ու տնկել:
6. Վայրակները տնկել շարքերով, շարքը շարքից 90 սմ և տնկին տնկուց՝ 35 սմ հեռավորության վրա 15|4—25|4-ի:
7. Յուրաքանչյուր որվա տնկածը նույն որը ջրել:
8. Կատարել կուլտիվացիա և քաղհան 5—6 անգամ, ջրելուց հետո, յերբ հողը քիչի յե գալիս. ժամկետ 5 5—1 10-ի:

9. Կաղմակերպել պայթար նկատվող հիվանդություններին և վնասատուների դեմ:
10. Նորմալ համարել յերբ տնկած վայրակների 97 տոկոսը կպչում է:

դ) Կորիզավորների ցանխար

1. Կորիզավորները ցանել անմիջապես տնկարանում աշնանը 20/10—15/11-ի, վորի հողը նախորդ պետք է վերամշակված լինի ամուսն ընթացքում:
2. Կորիզները ցանել 90 սմ լայնություն ունեցող մարզերում, կորիզը կորիզից 5—10 սմ հեռավորության և 4—5 սմ խորության վրա: Հետագայում կատարել նոսրացում, թողնելով բույսը բույսից 35 սմ հեռավորության վրա: Ավելացած տընկանյութով լրացնել չբուսած տեղերը: Այդ աշխատանքը կատարել, յերբ բույսը 3—4 տերեւների յե գառնում, տնկելուց հետո անմիջապես ջրել: Ջրել ըստ պահանջի 8—12 անգամ, 1/4—10/9-ի:
3. Կատարել կուլտիվացիա և փխրեցում 5—6 անգամ, յերբ ջրելուց հետո հողը քեշի յե գալիս:

յե) Պատվաստում

1. Համարակալել բոլոր հողամասերն ու վանդակները:
2. Գրել, թե վորտեղ ի՞նչ սորտեր են պատվաստելու և ի՞նչ քանակով:
3. Մինչև պատվաստելը տնկիները մաքրել ավելորդ շիվերից 25/7—15/8-ի:
4. Մինչև պատվաստելը, 2 որ առաջ, տնկիները ջրել և պատվաստի տեղերը մաքրել թաց շորով:

5. Աչքապատվաստն սկսել ոգոստոսի 10-ից և ավարտել սեպտեմբերի 10-ին:
6. Պատվաստի համար կտրել միամյա հասունացած շվերը՝
 - ա) առողջ, պտղաբերող ծառերից, լրիվ զարգացած բողբոջներով և ողտագործել միայն շվի միջին մասի «չքերը»:
 - բ) շվերի տերևները և բխիկները պետք է հեռացվեն անմիջապես կտրելուց հետո և թողնվեն շվի վրա միայն բողբոջներն ու տերևակոթուները:
 - գ) շվերը պահել ջրի կամ խոնավ շորի մեջ:
 - դ) շվերը կտրել յերեկոյան կամ առավոտյան հովին:
7. Պատվաստը դնել արմատավղից 3—5 սմ բարձրության վրա, փչող քամիների կողմից:
8. 15 որից հետո ստուգել չկպածները և կատարել վերապատվաստում, իսկ կպածների կապերը թուլացնել յեթե նրանք ամուր են:
9. Նորմալ է համարվում՝ յերբ աչքապատվաստի 95 տոկոսը հնդավորների և 75 տոկոսը կորիզավորների կպչում է:
10. Աշնան աչքապատվաստների բուզը լցնել հողով՝ 1/11—15/11-ի:

զ) Տնկառանի յերկրող ստրվա խնամք

1. Վաղ գարնանը հողը հետ տալ բուզ տված տեղից, կապերն արձակել, աչքը կպած տեղից 15—20 սմ բարձրության վրա կտրել վալրի մատը սուր դանակով:

2. Աչքապատվաստի դաշտում չկալած տնկիւնները վերապատվաստել աչքապատվաստի և կտրոնապատվաստի միջոցով:
3. Պատվաստացու մատերը կտրել ուշ աշնանը և ձմեռվա ընթացքում պահել խոնավ հողախառն ավազի կամ մաքուր ավազի մեջ թեք դրությամբ՝ նկուղներում, կամ այլ պիտիւնները կտրել զարնանը նախքան ծառերի հյութաշարժի սկսվելը:
4. Կրկնապատվաստը կատարել ապրիլի 10—25-ը:
5. Պատվաստը կապել յեղունկին (շիպին) նրա 7—8 սանտիմետր դառնալուն պես և մաքրել ավելորդ վայրի շվերն ու բողբոջները, թողնելով բացի պատվաստից նաև մեկ վայրի շիվ ծայրում, յեղունկը կանաչ դրության մեջ պահելու համար: Ամառվա ընթացքում պատվաստը կապել 2—3 անգամ, մաքրել վայրի շվերից 3—4 անգամ: Մատապատվաստները կապել ցցերին (հենարաններին), ծայրում թողած շիվի ծայրը կտրել պարբերաբար:
6. Ամառվա ընթացքում կատարել 2—3 անգամ պինցիրով կա (այն է՝ կտրել մեկ տարեկան տնկիւնների ճյուղերը 5—6 սմ յերկարության վրա):
7. Զրել ըստ պահանջի, վոչ պակաս 8—10 անգամ, ըստ վորում վերջի ջուրն ավարտել սեպտեմբերին:
8. Կատարել կուլտիվացիա և քաղհան 6—8 անգամ, յերը ջրելուց հետո հողը քեշի յե գալիս:
9. Հեռացնել պատվաստի յեղունկները բոլոր տնկաբաններում 15/6—30/6-ի:

Ե) Տնկաբանի յերտոյ ատրվա խմամբ

1. Մեկ տարեկան պատվաստած տնկիւնները ձևավորել լիդերային սիստեմով գյուղատնտեսի ցուցմունքով ու ղեկավարությամբ:
2. Ձևավորումը պետք է լինի ստանդարտ ձևով: Ինք բարձրությունը 45—80 սմ, վորից հետո թողնվում է սաղարթ, ըստ վորում բնի բարձրությունը պետք է լինի՝

Դեղձենիների համար	45—50 սմ
Ծիրանենիների	» 75—80 սմ
Սալորների	» 55—60 սմ
Բալերի	» 55—60 սմ
Կեռանների	» 75—80 սմ
Խնձորների	» 75—80 սմ
Տանձենիների	» 65—70 սմ:

Այդ չափին չհասած կամ թույլ աճած տնկիւնները չեն ձևավորվում, այլ 5—7 սմ բարձրության վրա ընտրել ամենաուժեղ բողբոջը և թողնելով յեղունկ, ծայրերը կտրել:

3. Սաղարթ կազմելու համար ընտրել 45 աստիճանի տնկյուն ունեցող առողջ բողբոջներ, 20—35 սմ միմյանցից հեռավորության վրա, հակառակ ուղղությամբ, թողնելով հիմնական ճյուղերի համար 2—3 բողբոջ բացի լիդերից (ծայրի ճյուղը), նախած տնկենու ուժեղությանը, ապա թողնել յեղունկ լիդերը կապելու համար: Բողբոջները հեռավորությունը պետք է լինի՝

ա) ծիրանի, խնձորի, տանձենու և կեռասի համար 30—35 սմ.

բ) դեղձերի, բալերի, սալորենիների համար 20—25 սմ.

4. Հատուկ խնամք տանել սաղարթի զարգացման վրա, յեղած բոլոր ավելորդ շվերը կտրելով 4—5 սմ յերկարության վրա, կտրել նաև սաղարթի միջի ավելորդ շվերը (վորոնք աճել են ընտրված հիմնական ճյուղերի արտնքում), վորով հնարավորություն կտրվի հիմնական ճյուղերին լավ դարգանալու:
5. Զրել վոչ պակաս 5—7 անգամ. վերջի ջուրն ավարտել հոկտեմբերի վերջերին:
6. Կատարել կուլտիվացիա և քաղհան 4—5 անգամ, ջրելուց հետո, յերբ հողը քեչի յե գալիս:
7. Կազմակերպել պայքար յերևացող հիվանդությունների և ֆսասատունների դեմ:
8. Մաքրել բները և հեռացնել սաղարթի յեղունկները՝ 15/8—25/8-ի:
9. Տնկիները հանել աշնանը տերևաթափից հետո—25/10—15/11-ի:
Իսկ յեթե տնկիները տերևաթափը ուշանում եւ այդ դեպքում տնկիները չպետք ե հանել (տնկիները հասունացած չեն), պետք ե թողնել և գարնանը հանել տնկման համար, նախքան հյութաշարժության սկսվելը 15/3—14/4-ի:
10. Տնկիները բաց թողնել՝
ա) գարնան համար՝ 15/3—14/4 ի.
բ) աշնան » 25/10—10/11-ի, իսկ ֆնացած հանված տնկիները թաղել հողում թեք դրությամբ և պահել մինչև գարունը:
11. Տնկելու համար բաց թողնել առողջ, ուղիղ բուն ունեցող տնկիները, վորոնց սաղարթը լինի 3 հիմնական ճյուղից վոչ պակաս (հաշված նրա լիզերը

և), արմատային սիստեմը լինի փարթամ աճած և հիվանդություններից զերծ ֆնացած:

12. Մեկ հեկտարից ստանալ՝
ա) կորիզավոր մեկ տարեկան . . . 18.000 հատ
բ) հնդավոր » » 3.000 »
գ) » յերկու » 20.000 »

բ) Պեղատու ճիւղ տյգիների խնամքը

1. Այգիները ետել և չորուկները հեռացնել՝
ա) հնդավորներին 5/4—20/4-ի.
բ) կորիզավորներին՝ 5/4—15/4-ի:
Առաջացած վերքերին մածուցիկ քսել:
2. Ծառերի բուժումը կատարել՝
ա) 1-ին բուժումը՝ բորդոյան հեղուկի մեկ տոկոսային լուծույթով, խառնելով յուրաքանչյուր դուլլին 8 գրամ փարիզյան կանաչ՝ 5/4—20/4-ի:
բ) 2-րդ բուժումը՝ բորդոյան հեղուկի 0,75 տոկոսային լուծույթով, խառնելով յուրաքանչյուր դուլլին 10 գրամ փարիզյան կանաչ՝ 5/5—20/5-ի:
գ) 3-րդ բուժումը բորդոյան հեղուկի մեկ տոկոսային լուծույթով խառնելով յուրաքանչյուր դուլլին 12 գրամ փարիզյան կանաչ՝ 25/5—10/6-ի:
դ) Պայքար լվիճի դեմ—12/5—20/5-ի:
յե) 5-րդ բուժումը՝ յերկաթ-արջասպի 5 տոկոսային լուծույթով, տերևաթափից անմիջապես հետո՝ 5/11—20/11-ի:

Այս բուժումը աշնանը չկատարելու դեպքում կատարել վաղ գարնանը՝ 1/3—10/3-ի:

3. Աշնանային ծառաբուժումից առաջ ծառերի բները մաքրել փտած կեղևներից և այլ մնացորդներից, խնամքով հավաքել և այրել այգպիտիները. նույնպես հավաքել և այրել ծառերի տակը թափված տերևներն ու այլ որդանական մնացորդները:
4. Աշնան և վաղ գարնանը կատարել ծառերի բների շուրջը փորելու աշխատանքները:
5. Այգիները ջրել 5—6 անգամ և պարբերաբար կատարել փրբեցում ծառերի շուրջը:
6. Ամառվա ընթացքում պտղով ծանրաբեռնված ծառերին նեցուկ տալ:
7. Չորացած ծառերի տեղը լրացնել նոր ծառերով, միաժամանակ կատարել պատվաստում և ձերացած ծառերի յերիտասարգացում:
8. Ազրոնոմների ղեկավարությամբ ու ցուցմունքներով կատարել նորատունկ ծառերի ձևափորումը:



«Ազգային գրադարան»



NL0276917

226

15049